ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«03» նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. Տեղեկատվություն՝ արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.

«Բի Լայն» ՍՊԸ-ի, «ՓԻ-ՍԻ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է.

-«Բի Լայն» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները,

-«ՓԻ-ՍԻ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, փոխարենը ներկայացրել է նոր ապրանքի ամբողջական նկարագիր, որի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝

-«ՓԻ-ՍԻ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի հայտը 4-րդ չափաբաժնի մասով մերժել,

-4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝

1) նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

3) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. նոյեմբերի 08-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 09-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Մելքոնյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Արթուր Թամրազյան

Խորեն Պետրոսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան